ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2012 թվականի երկրորդ կիսամյակի հաշվետվության

1.Գործավարություն.

2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 72 դիմումներ և առաձարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:

Համայնքի բնակիչներին տրամադրվել են 668 հատ տեղեկանքներ, 8հատ բնութագրեր:

Հղվել են 151 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 33 որոշում և արձակվել 28 կարգադրություն:

2.Ավագանու գործունեություն.

2012 թ երկրորդ կիսամյակի ընթացքում ավագանին գումարել է 6 հերթական և 3 արտահերթ նիստ:Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2012 թվականի տարեկան բյուջեում:

Հաստատվել է 2013-2016 թվականների զարգացման ծրագիրը,հաստատվել է համայնքի 2013 թվականի բյուջեն,մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

Սահմանվել է 2013 թվականի ընթավրում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Ընդունվել է համայնքի ավագանու կանոնակարգը:

Ավագանու քննարկմանն է ներկայացվել 49 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3.Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

Բնակավայրային նշանակության հողեր՝ 116 հա

Գյուղ նշանակության հողատարածք՝ 274 հա,որից

Խաղողի այգի՝ 2,3 հա

Պտղատու այգի՝ 11,4 հա:

2012 թվականին կատարվել է 16 հա հացահատիկի, 5 հա գարու,1-հա կաղամբի,45 հա բոստանային կուլտուրաների,10հա վարունգի, 32 հա լոլիկի,15 հա բաղրջանի, 7 հա պղպեղի, 153 հա կերային մշակաբույսերի/առվույտ/:

4.Անասնագլխաքանակ.

Խոշոր եղջերավոր անասուններ՝282 գլուխ,որից կովեր՝102 գլուխ.

Մանր եղջերավոր անասուններ՝ 516 գլուխ ոչխար,որից մայրեր՝481 գլուխ.

Խոզեր՝24 գլուխ.որից մայրեր՝3 գլուխ.

Մեղվարնտանիք՝44 հատ.

Թռչուններ՝555 գլուխ:

5.Համայնքի սեփական եկամուտներ.

2012 թվականին բյուջեով նախատեսվել է 4400,0 հազար դրամ հողի հարկից եկամուտ:2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ գանձվել և մուտքագրվել է 4516,6հազ.դրամ հողի հարկ,որը կազմում է հողի հարկի տարեկան պլանի 102,6 %-ը:

Գույքահարկի տարեկան եկամուտ է պլանավերվել 2800,0 հազ.դրամ,գանձվել և մուտքագրվել է 3330,7 հազար դրամ,պլանը կատարելով 118,9%-ով :

Տեղական տուրքերի պլանը կազմել է 187,9 հազար դրամ,մուտքագրվել է 202,1 հազար դրամ,եկամուտի պլանը կատարվել է 107,9 %-ով:

Վարձավճարի պլանը՝690,0 հազար դրամ,կատարողականը՝281,2 հազ.դրամ,կատարման %-ը՝40,7%:

2012 թվականի համայնքի սեփական եկամուտների պլանը կազմել է 8077,9հազար դրամ: Փաստացի մուտքերը կազմել են 8330,6 հազ.դրամ,պլանը կատարելով 103,1%-ով:

2012 թվականին Պետական բյուջեից հատկացվել է 17718,4 հազ.դրամ դոտացիայի գումար:

Խիստ բնաղատվեցին այն բնակիչները,ովքեր տարիներ շարունակ չեն կատարում իրենց հարկային պարտավորությունները,իսկ պարտաճանաչ հարկատուները արժանացել են խրախուսանքի:

6.Ծախսեր.

Ակնաշենի գյուղապետարանը 01,01,2012 թ-ից մինչև 31,12,2012թ-ը կատարել է հետևյալ ծախսերը՝

Վճարվել է աշխատավարձ՝ 12274,3 հազ. դրամ

Պարգևատրում համայնքային ծառայողներին՝ 400,0հազ. դրամ.

Փոխանցվել է սոց.ապ.վճարներ՝ 1714,7 հազ.դրամ.

Էներգետիկ ծառայությունների դինաց փոխանցվել է՝ 1250,0 հազար դրամ.

Կապի ծառայությունների դիմաց՝ 210 հազար դրամ.

Տրանսպորտի վարձակալության համար

փոխանցվել է՝ 960,0հազ. դրամ.

Աղբահանության համար՝ 900,0 հազար դրամ.

Ներքին գործուղումների համար ծախսվել է՝ 110,3 հազար դրամ.

Տեղեկատվական ծառայությունների դիմաց փոխանցվել է՝ 133,0 հազար դրամ.

Ներկայացուցչական ծախսերի համար ծախսվել է՝ 600,0 հազար դրամ.

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար՝ 2092,4 հազար դրամ.

Մասնագիտական ծառայությունների դիմաց՝ 122,6 հազար դրամ.

Գրասենյակային նյութերի դիմաց՝ 350,0 հազար դրամ.

Տրանսպորտային նյութերի դիմաց՝ 250,0 հազար դրամ.

Կենցաղային և հանրային սննդի ապրանքների դիմաց՝ 200,0 հազար դրամ.

Ճանապարհների և կառույցների ընթացիկ նորոգման դիմաց՝ 1440,0 հազար դրամ.

Նվիրատվությունների համար՝ 502 հազար դրամ.

Անապահով ընտանիքներին սոցիալական օգնության համար ծախսվել է, 1740,0հազար դրամ.

Միջոցառումների համար ծախսվել է, 376,8 հազար դրամ.

7.Ազգաբնակչություն.

Ակնաշեն համայնքի փաստացի բնակիչների թիվը կազմում է 1724 մարդ.

2012 թ. ընթացքում ծնվել է 18 երեխա,գրանցվել՝ 15 մահ.

Ընտանեկան նպաստ ստացողների քանակը՝20 ընտանիք.

Համայնքի թոշակառուների քանակը՝ 175 մարդ.

8.Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝162 աշակերտով:

Համայնքի նախկին բնակիչ՝Աշոտ Ասոյանի հովանավորությամբ դպրոցին հարակից բացվել է բմբշամարտի մարզադահլիճ,որի բացման միջոցառումը կազմակերպվել և անցկացվել՝ գյուղապետարանի կողմից:

9.Մշակույթ.

Համայնքն ունի ակումբ՝ մեկ աշխատողով,գործող գրադարան՝1 աշխատողով՝որոնք ներառված են գյուղապետարանի աշխատակազմում:

10.Առողջապահություն.

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա՝ 2 աշխատողով:

11.Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2012 թ. աշնանային զորակոչը և կատարարվել է պլան առաջադրանքը:

12.Միջոցառումների և սոցիալական ոլորտ.

Մայիսի 9-ի Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման տոնի առթիվ կազմակերպվել է մեծ միջոցառում,որին մասնակցել են նաև Արցախյան ազատամարտի մասնակիցներ:

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել և մեծ հանդիսությունով անցկացվել է միջոցառում՝ բազմաբանակ երեխաների,նրանց ծնողների և բնակիչների մասնակցությամբ:

Մեծ հանդիսությամբ կազմակերպվել և անցկացվել է նաև 2012 թվականի տարեմուտի երեկո:

Պարբերաբար համայնքում իրականացվում է աղբահանություն:

13.Համայնքի հիմնախնդիրներ.

Համայնքի հիմնախնդիրներից է համարվում խմելու և ոռոգման ջրերի ցամաքելու պատճառով նոր խորքային երկու հորերի հորատելը, որոնցով հնարավոր կլինի պոմպերի միջոցով բավարարելու բնակչության խմելու և ոռոգման ջրերի պահանջը,որի համար կպահանջվի 30.000.000 դրամ:

Համայնքի հիմնախնդիրներից է համարվում կուլտուրայի տան դահլիճի վերանորոգումը, որի համար կպահանջվի 5.000.000 դրամ:

Համայնքի հիմնախնդիրներից է համարվում մանկապարտեզի շենքի վերանորոգումը, որի համար կպահանջվի 25.000.000 դրամ:

Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգումը, որի համար կպահանջվի 15.000.000 դրամ:

Ակնաշենի գյուղապետ /Ս.Միսակյան/